

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material









0 2 NOV 2010



NEW YORK

792 (47.925)  
 2-37



# Յ Ո Ւ Շ Ե Ր

1897 - 1923

\*\*

Ես բանաստեղծ չեմ, որ կարողանամ գեղեցիկ նկարագրութիւններով հետաքրքրական դարձնել ինձ հետ պատահած դէպքերը, ո՛չ, ինչ որ յիշողութիւնս թելադրէ՝ միայն այն պիտի գրեմ, պարզ եւ կարճ:

Ես ծնւել եմ 1879 թուին, Մարտ 23, Ալէքսանդրապօլ քաղաքում (Կովկաս):

Հօրս անունն էր Գէորգ, իսկ մօրս՝ Շողակաթ: Նրանք ունեցել են մէկ աղջիկ եւ հինգ տղայ զուակներ: Հայրս եկեղեցիներ եւ տներ շինող վարպետ է եղել: 1884 թ. Հարիճոյ Վանքը (Ղըպչաղ) նորոգելու ժամանակ հայրս ծանր աշխատանքից յոգնած գնում է իւր սենեակը հանգստանալու, մինչ եղբայրըս գնում է դրացի տնից կաթ բերելու. վերադարձին գտնում է հօրս յանկարծամահ եղած: Միաբանութեան որոշումով հօրս թաղում են Հարիճոյ Վանքի բակում: Մի տարի յետոյ 1885 թ. վշտից մեռնում է եւ մայրս:

Հօրս եւս գրեթէ չեմ յիշում: Աղօս կերպով յիշում եմ մօրս պատկերը, անկողնում պսակած, դուռնատ, նիհար, չեկ մազերը երեսին եւ բարձի վրայ թափուած՝ ինչպէս արեւի ճառագայթները ձմեռնային մարտոզ վերջալոյսին:

Ծնողներին մահից յետոյ, փոքրիկներին մեծացնելու հոգսը ընկնում է անդրանիկ եղբորս՝ Արիստղոսի եւ նրա գեռատի կնոջ՝ Մարգարիտի վրայ:



Գեղասան Յ. ԶԱՐԻՅՅԱՆ

Մանկութիւնից եւ նրանց հայր եւ մայր եմ անուանել եւ մինչեւ օրս էլ շատերը կարծում են, որ ես նրանց հարագատ զուակն եմ. մենք չէինք գիտում մեր ծնողների մեծ կորուստը, որովհետեւ ծնողական սէր եւ զուրգուրանք վայելում էինք. բայց իմ խեղճ եղբայր — հայրս՝ իր վաստակով անկարող էր կերակրել եւ կրթել մեզ, այդ պատճառով երբ մենք մեծացանք եւ աշխատելու ընդունակ դարձանք, մեզ տեց արհեստ սովորելու. երկու եղբայրներին՝ գերձակի, իսկ ինձ՝ կօշկակարի մօտ: Մենք առաւօտեան գնում էինք դպրոց, իսկ կէսօրից յետոյ արհեստանոց, որպէսզի մեր օրուայ պարէնը հայթայթենք եւ թեթեւացնենք մեր մեծ եղբոր բեռը:

## ԻՄ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Ինձանից մեծ երկու եղբայրներս արդէն սկսել էին մարզ դառնալ, փող վաստակել...: Կիրակի օրերը երբեմն նոյն իսկ կարողանում էին գնալ թատրոն: Դպրոցական արձակուրդների ժամանակ՝ Չատակահ, տօնի առթիւ, ինձ էլ իրանց հետ տարան թատրոն: Սրտաբրտի սպասում էի թէ ի՞նչ պիտի տեսնեմ. խաղում էին «Արշակ Բ.»: Ներկայացումից ոչինչ չհասկացայ, որովհետեւ չլացած էի տեսարաններից եւ հագուստներից: Թատրոնից վերադարձանք տուն. չը կարողացայ ընել...



Ամբողջ գիշերը աչքիս առաջն էին Արչակ թագաւորը... Նրան տանջող թուրքը... իշխաններն ու զօրքը... Ի՞նչ էր կատարում ինձ հետ, չէի հասկանում. բայց հոգիս լի էր երջանկութեամբ. մարդ էի փնտռում որ պատմեմ տեսածներս ու հոգիս թեթեւանայ, բայց ոչ ոք չկար. ամէնքը խաղաղ ու հանգիստ քնած էին, անհամբեր սպասում էի լուսարացին: Առաւօտեան առանց նախաճաշելու վաղեցի ընկերներիս մօտ եւ պատմեցի թատրոնում տեսածս: Պատմելու ժամանակ ընկերներս բերանարաց ինձ էին նայում, որովհետեւ ես պատմում էի նմանեցնելով դերասաններին: Երբ ես վերջացրի, նրանցից մէկը, որի անունն էր Սէրգօ, ասաց. «Աստուած սիրես մէկ էլ պատմիր, թէ մեր Արչակ թագաւորը ի՞նչ ասաց թուրքին» որը եկել էր շղթայելու նրան»: «Ի բա՛ց, ի բա՛ց վատարանց» գոռացի ես: Սէրգօն սարսափից վեր թռաւ. ապա ես նորից պատմեցի ամբողջ ներկայացումը:

Այդ ամառուայ ընթացքում, եղբայրս տեսնելով իմ չափազանց հետաքրքրութիւնը, յաճախ տանում էր ինձ թատրոն: Տեսայ «Ասրան Բալասի» (Վէրք Հայաստանի), «Աւազակները» եւ «Կորրատօն»:

Իմ մանկական հոգու համար չափազանց ուժեղ եւ ցնցող էին այդ խաղերը, եւ ունեցան խորը ազդեցութիւն:

Օրեր ու գիշերներ ես ապրում էի այդ յիշողութիւններով... խոսվել էր հանգիստ:




ԶԱՐԻՖԵՆԱՆ — «Համիլտո»

Ես ու Սէրգօն մի օր որոշեցինք իրանց տան մէջ խաղալ «Արչակ Բ.ն»: Մենք հասկացողութիւն չունէինք որ այդ խաղերը որ ներկայացնում են, գրուած են եւ պէտք է գրքերից սերտել բաժինները: Մենք խաղում էինք մեր բառերով, ի հարկէ մօտաւորապէս յիշելով դերասանների ասածները:

Սէրգօն չէր տեսել «Արչակ Բ.»ը, այդ պատճառով ես էի սովորեցնում նրան. նա սկզբում համաձայնուեց, բայց յետոյ ասաց որ ինքը իր բառերով յարմար պատասխաններ կտայ ինձ:

Մենք շինեցինք բեմ Սէրգօյի տան մէջ գոյնզգոյն վերմակներով եւ գորգերով...: Հազանք կանացի ջիւպպէներ, դարձարեցինք բաղնիքի ցամքոցներով եւ փէշտիմալներով...: Երեսներս ներկեցինք ալիւրով ու կօշիկի ներկով եւ սկսեցինք խաղալ: Մեր հանդիսականներն էին Սէրգօյի ծնողները, գրացիներ եւ մեր ընկերները: Ներկայացումը անցաւ փայլուն, թէ մենք դո՛հ էինք եւ թէ հանդիսականները. միայն Սէրգօյի հայրը նկատեց՝ որ Սէրգօն անվայել հայհոյանքներ էր անում, որ չպիտի անէր...: Սէրգօն համետութեամբ պատասխանեց որ ինքը խօսքերասան չէ, դերասանը Օհաննէսն է: Որովհետեւ մեր առաջին ներկայացումը շատ լաւ տպաւորութիւն թողեց, մենք որոշեցինք ամեն կիրակի խաղալ: Այնուհետեւ խաղացինք «Աւազակներ», «Կորրատօ», «Ասրան Բալասի», որոնց մէջ հերոսը միշտ ես էի խաղում. իսկ հակառակորդը Սէրգօն: Մեր ներկա-



յայցումները վերջացնում էինք միշտ ծեծկրուքով ու սպանութիւնով:

Ի դէպ մի քանի խօսք Կորրատօի խաղի մասին: Երբ ես թունաւորւած տանջուած էի, ու սարսափելի ծամածրութիւններով ստքերս գեանէ գեաին զարկելով թաւալում փոշու մէջ, Սէրգօն բերանարաց ինձ էր նայում եւ հիացմունքից նա մոռացել էր վարագոյրը գոցելը:

Բայց աւա՛ղ, մեր երջանկութիւնը կարճ տեւեց. ներկայացումները դադարեցին, Սէրգօյի հայրը իր ընտանիքը տեղափոխեց Թիֆլիզ. մնացի մենակ եւ խիստ տխուր: Ճիշտ է, ուրիշ ընկերներ էլ ունէի, բայց ոչ մէկը չէր փոխարինի Սէրգօյին: Մեծ եղբայրներս գործերը հետզհետէ յաջող էին գրնում. նրանք բաց արին նպարավաճառի խանութ, եւ ինձ էլ հանեցին կօշկակարի մօտից ու տարան իրանց մօտ: Խանութում ազատ բողջներին կարգում էի Բաֆֆիի «Խենթը» եւ գրեթէ դոց արել: Երբ եղբայրս սրեւէ բան էր ուզում, ես պատասխանում էի «Խենթի» խօսքերով եւ դերասանի արտասնութեամբ: Որքան էլ լուրջ լինէր բողջն, իմ պատասխանը ծիծաղ էր սրուցանում: Մի օր եղբայրս ասաց... «Գնա ներսից տասը տուփ ծխախոտ բեր»: յաճախորդները սպասում էին... ես գնացի եւ վերադարձայ դրօշակը ձեռքիս. «Տէր արքայ, թշնամին յաղթուեց ու փախաւ, պատերազմը վերջացաւ»: Յետոյ դառնալով դէպի յաճախորդները խիստ լուրջ ասացի. «Ողջոյն քաջերիս»: Ամենքը ծիծաղեցին, ահամայ ծիծաղեց եւ եղբայրս ու գրլուխը շարժեց: «Մօ այս տղան դերա-



ԶԱՐԻՖԵԱՆ — «Վանահայր»

սան է, այստեղ ի՞նչ գործ ունի, սրա տեղը թատրոնն է» ասաց յաճախորդներին մէկը:

1897 թ. «Մշակ» լրագրում կարգացի օր Թիֆլիզի եւ Բագուի համար կազմուած են դերասանական խմբեր: Կրակը ընկաւ սիրտս, — ի՞նչ պիտի լինի իմ վիճակը, — գիշեր ցերեկ մրտածում էի ու ծրագիրներ կազմում փախչելու համար: Մտածում էի արգօք լաւ չի՞ լինի, եթէ յայտնեմ եղբորս նըպատակս, գուցէ նա ինքը համաձայնի եւ թոյլ տայ ինձ գնալ: Երկար տատանումներից յետոյ, մի գեղեցիկ օր ասացի եղբորս, որ ուզում եմ դերասան դառնալ եւ խումբ մտնել. «Թոյլ տուր ինձ գնալ Թիֆլիզ»: Եղբայրս կուշտ ծիծաղելուց յետոյ ասաց ինձ. «Այդ մտքիցդ հանիր, դերասան դառնալը դիւրին բան չէ, խելքդ գլուխդ հաւաքիր»:

Յուսահատութիւնս անսահման էր, բայց վճիռս անդարձ... Սէրգօն Թիֆլիզ է մտածում էի ես, ուրեմն վախենալու բան չունեմ, նա ինձ կ'օգնի: Երբ օրից յետոյ հաւաքեցի իրերս, արնից վերցրի հաց, պանիր—հինգ օրուայ պաշար—եւ ճանապարհ ընկայ դէպի Թիֆլիզ: Փուրղօնի մէջ (ձիաքարչ սայլ) թաղնւած, սարսափով յետ էի նայում, եւ ամեն մի ձիաւոր տեսնելիս չունչս պահած սպասում էի թէ մի գուցէ եղբայրս է, որը հետեւում է ինձ բռնելու եւ յետ տանելու համար, եւ միայն այն ժամանակ ազատօրէն շնչում էի, երբ ձիաւորը համեւ էր մեր սայլին եւ ես տեսնում էի նրա դէմքը:

Հասայ Թիֆլիզ եւ բաւական դըժ-

ուարութեամբ դտայ Սէրգօին. նա զարմացած էր իմ յանդու-  
զըն քայլից. ես յայտնեցի նրան փախուստիս պատճառը եւ  
բեմին նւիրուելու որոշումս:

### ԻՆՉՊԵՍ ԲԵՄ ՄՏԱՅ

Մի քանի օրից յետոյ Սէրգօն ինձ  
ներկայացրեց դերասան Պ. Գէորգ Պա-  
րոն-Սարգսեանին: Սա մի գինեմոլ,  
բայց վերին աստիճանի ազնիւ ու հա-  
մակրելի մարդ էր. թեթեւ հարցաքնն-  
նութիւնից յետոյ Պ. Պարոն-Սարգսեա-  
նը ինձ ընդունեց եւ ժամադրութիւն  
նշանակեց Սեպտեմբեր 1ին, Վրաց  
«Ազնուականների թատրոն»ում՝ ուր պի-  
տի լինէր դերասանների առաջին ժո-  
ղովը: Ուրախութեանս չափ չկար. . . նը-  
րանից բաժնուելիս ոչ թէ քայլում, այլ  
թռչում էի: Որովհետեւ դպրոցական  
ցանկալի կրթութիւն չէի ստացել, եւ  
մանաւանդ հայ դպրոցներում բաւակա-  
նաչափ ուսերէն չէին սովորեցնում որ  
կարողանայի ազատ խօսել՝ ես ու Սէր-  
գօն վճռեցինք որ ես դնամ ուսուսական  
դպրոց, որ մի քիչ էլ ուսերէն սովո-  
րեմ: Երկրորդ օրն իսկ դնացինք Պ.  
Տէր Ստեփանօվի մօտ եւ խնդրեցինք  
որ ինձ ընդունէ իր պանսիօնը: Ուսուց-  
չապետը ինձ ընդունեց եւ ես սկսեցի  
յաճախել դպրոց:

Սեպտեմբեր մէկին, ես ու Սէր-  
գօն դնացինք թատրոն: Սէրգօն ներս  
չեկաւ, այլ սպասեց փողոցի անկիւ-  
նում. թատրոնում հաւաքել էին դերասանները: Պ. Պարոն-  
Սարգսեանը ինձ ներկայացրեց դերասաններին որպէս սկըս-  
նակի. բոլորն էլ սիրով ընդունեցին: Ժողովը որոշեց բանալ  
սէզօնը Նոյեմբեր 5ին «Չարադուշակ Բայլ» պիէսով, եւ ինձ  
ուրիշ դերմանացի սպասաւոր Նօհանի դերը: Ուրախութիւնս

անսահման էր, դուրս եկայ դերը ձեռքիս. Սէրգօն մօտեցաւ եւ  
անհամբերութեամբ հարցրեց.

— «Հը՞, ի՞նչ եղաւ»:

— «Այ» ասացի, եւ ցոյց տւի դերս:

Ներկայացման օրը Սէրգօն համ-  
բուրեց ինձ եւ ասաց. Դէ՛ քեզ տես-  
նեմ, ցոյց տուր շնորհքդ: Ներկայա-  
ցումը վերջացաւ. . . ես երջանկութեան  
զազաթնակէտին էի հասած:

Երկու օր յետոյ «Մշակ» օրագրում  
երեւացել էր Պ. Ալէքսանդր Մուրադ-  
բէկեանի (այժմ Խորէն Արքեպիսկո-  
պոս) քննադատութիւնը, ուր ի միջի  
այլոց ինձ եւս դոված էր: Դերասան  
ընկերներս ինձ շնորհաւորեցին: Եղ-  
բայրս Ալէսանդրապօլում պատահամբ  
կարդում է այդ քննադատութիւնը.  
զարչիս է Թիֆլիզ ստուգելու թէ ե՞ս  
եմ արդեօք այդ յիշած Չարիֆեանը:  
Խաղում էինք «Ասլան Բալասի». ես  
կատարում էի թուրքի դեր «Օքիւզ ա-  
դա» անունով, որը շարունակ հայհո-  
յում էր հայերին: Խաղի ժամանակ  
թատրոնում նստած երկու պարոնների  
մէջ ընդհարում է տեղի ունենում:

ա. պ.) Ծօ շուն, ձէնդ կտրէ, թէ չէ  
հէրդ կ'անիծեմ:

բ. պ.) Մի հայհոյիր պարոն, ամօթ  
է:

ա. պ.) Ծօ դու ինչ հայ ես, որ  
թուրքի մէկը մեզի կը հայհոյէ եւ դու  
լռում ես. եւ դառնալով դէպի բեմ է  
ուղղում իր խօսքերը:

«Լեզուդ պէտք է քեզ քաշե՞ս, թէ չէ՞ Աստուած վկայ փո-  
րրդ մուխով կը լեցնեմ», եւ ձեռքը տանում է դրապանը՝ ատըր-  
ճանակը հանելու:

բ. պ.) Ի՞նչ ես անում պարոն, խելքդ դը՞ւրիք է. . .

ա. պ.) Ծօ թող մի ես դրան շան պէս սատկեցնեմ:



ԶԱՐԻՖԵԱՆ — «ՕՔԻՒՍ»

բ. պ.) Ուշքի եկ պարոն, ախր էդ տղան իմ փոքր ախպէրս է... դերասան է. դու թատրոնումն ես:

ա. պ.) Ամօթ քեզ համար, ծօ էդպէս ախպէր կուեննա՞ն... ծօ էդպէս հայ կլինի՞: Մենք փարա ենք տւել որ դանք մեր ազգի մասին հայհոյանքները լսենք: Ամօթ է... ամօթ, խըրատիր ախպօրդ այդպիսի բաներ չանէ:

բ. պ.) Ախր բարեկամ, սխալ ես, նա էդպիսի տղայ չէ. իրան տրւած դերըն է դէչ:

Թատրոնի ոստիկանը միջամտում է ու միճարանութիւնը դադրեցնում: Ներկայացումից յետոյ դուրս եմ գալիս ուրախ-ուրախ: Սէրգօն սպասում էր թատրոնի դռանը: Յանկարծ մէկը թեւս բռնեց. յետ նայեցի, եղբայրս էր: Արիւնը սառեց երակներին մէջ. քարացայ, լեզուս կապեց, դէմքս այլայլւեց:

—Որտեղի՞ց կուգաս, հարցրեց եղբայրս:

—Թատրոնից, — պատասխանեցի ես:

—Ինչ էիր անո՞ւմ:

—Ոչինչ...

—Ճի՞շտ է որ դերասան ես դարձել, — շարունակեց նա:

—Ո՛չ:

—Սուտ մի խօսիր... ես տեսայ քեզ բեմի վրայ:

Ես լուռ էի:

—Չես ամաչո՞ւմ, ինչո՞ւ ես մեկ խայտառակում:

Աչքերս մթնեց, սիրտս սկսեց բարախել. արցունքի կաթիլները սկսան



ԶԱՐԻՖԵԱՆ — «Գիմ-Դանիէլ» (Չար Ոգի)

տաքացնել սառած այտերս: Եղբայրս նկատելով այդ՝ չկարողացաւ իրան զսպել. տարածեց բազուկները եւ գըրկեց ինձ: «Անուշ ջան, մի՛ լար»: Ես երկար ժամանակ լալիս էի եղբօրս կրծքի վրայ:

—Ինչո՞ւ ես եկել, հարցրի ես...

—Եկել եմ քեզ տեսնելու, այդպէս հեռանալ կլինի՞ առանց մեզ յայտնելու... լաւ է գէթ լրագրից իմացանք որ դու Թիֆլիզ ես:

Ես լուռ եւ ամօթահար նայում էի ցած: Նա խորհուրդ տւեց հեռանալ այդ ասպարէզից, որովհետեւ մարդիկ մեզ են մեղադրում, որ դու ընկել ես այդ ասպարէզը, աւելացրեց նա եւ պատմեց թատրոնում իր հետ կատարւած միջադէպը: Մենք գնացինք տուն: Ամբողջ երեք ժամ Սէրգօն համոզում էր եղբօրս որ ինձ թոյլ տայ դերասան դառնալ, նա թւում էր իմ առաւելութիւնները, խօսում էր իմ բեմական ընդունակութիւնների մասին: Եղբայրս ներողամտարար ժպտում էր Սէրգօի արած չափազանցութիւնների վրայ եւ մեզ բացատրում թատրոնի լրջութիւնն ու բարձրութիւնը մեզ նման թերուս պատանիների համար:

—«Դերասան դառնալու համար անհրաժեշտ է լուրջ կրթութիւն. լաւ մտածիր քո արած քայլի մասին», վերջացրեց եղբայրս եւ ինձ յանձնեց իմ ճակատագրին:

Առաւօտեան բարի եղբայրս, ինձ համար նոր հագուստներ գնեց, ոտքից գլուխ զարդարեց, դրամ տւեց եւ օրհնեց իմ ուղին՝ դէպի տառապանքի եւ գեղեցկուրեան տաճարը: Ես խոստացայ եղբօրս հետեւել իր խորհուրդին

եւ լրջօրէն զբաղել ինքնօգնութեամբ: Եղբայրս մեկնեց Ալէքսանդրապօլ: Ես վճռեցի ամեն գնով դառնալ պատուաւոր մարդ, որպէսզի իմ վարմունքով չխայտառակեմ եղբայրներիս անունը:

Այնուհետեւ ես ինձ զրկեցի բոլոր վայելքներէց, զիշեր ու ցերեկ աշխատեցի, որ ձեռք բերեմ այն պակասը՝ ինչ որ անհրաժեշտ էր իմ ընտրած ասպարէզի համար: Եւ ես հարգեցի իմ ուղին շնորհիւ իմ զօրեղ կամքի եւ սուկուն աշխատանքի: Իմ սկզբունքն էր զոհել ամեն ինչ՝ յանուն իմ ընտրած ասպարէզի:

#### ԻՄ ԱՌԱՋԻՆ ՃԱՄԲՈՐԳՈՒԹԻՒՆԸ

1898 թ. Յունիս 20ին Թիֆլիզի դերասանական խումբը հասաւ Շուշի քաղաքը: Իրերս սենեակ գնելուց յետոյ դուրս եկայ փողոց զեղեցկանալու համար եւ մտայ սափրիչի խանութը: Բաւական հերթի սպասողներ կային: Ռուսերէն լեզուով բարեւեցի եւ նստեցի: Մէկը կարդում էր «Մշակ» լրագիրը, իսկ միւսները խօսում էին: Երբ ինձ տեսան սկսեց շուշիներ, փափսոցներ հերթի սպասողների մէջ: Ես ըզզացի որ իմ մասին են խօսում, սակայն ոչինչ չէի հասկանում, որովհետեւ Ղարաբաղի բարբառով էին խօսում: Ես ինձ բաւականին անյարմար էի զգում այդ անձանօթ շրջանի մէջ եւ շատ ուրախացայ երբ «Մշակ» կարգացողը թերթը դրեց սեղանի վրայ: Ես անմիջապէս մօտեցայ եւ վերցրի «Մշակ»ը ու սկսեցի կարդալ: Այնտեղ գրեւոր էր մեր խմբի ամառայ սէզօնի մասին: Անհամբերութեամբ որոնում



ԶԱՐԻՖԵԱՆ — «Ուրիել Ակօստա»

էի թերթի մէջ թէ արդեօք չե՞ն մուսցել անունս դերասանների շարքում եւ շատ գոհ եղայ երբ գտայ:

Ես հագիւ սկսել էի կարդալ երբ նկատեցի որ հերթի սպասողները մէկիկ-մէկիկ դուրս են գնում գլխիկոր եւ գսպեւած քրքիջներով:

Սափրիչը տեսնելով որ իր յաճատորները դուրս են գնում, կանչեց.

—Ադա թոռն էաք քինամ, խրէկ մնաց, պըրծընըմ ամ.

Հերթի սպասողները խանութի դուռնը կանգնած աչքի տակով ինձ էին նայում եւ միմիանց հետ խօսում: Երբ սափրիչը վերջացրեց իր գործը ինձ հրաւիրեց: Նստեցի:

Սկսեց հարցաքննութիւնը, եւ երբ իմացաւ որ հայ եմ եւ դերասան, ու եկել եմ Շուշի խմբի հետ, շատ ուրախացաւ եւ սկսեց խօսել բեմի մասին, Աղամեանի մասին, Երեսիս տասնեւփեց մազերը ինամքով սափրելով: (Երեսիս մազերը դեռ նոր էին բուսնում, բայց ես սափրում էի որ մեծ երեւամ, ԴԵՐԱՍԱՆ երեւամ):

—Դուք այսօր իմ հիւրն էք ասաց սափրիչը երբ վերջացրեց իր գործը եւ հրաժարեց գրամից: Ես զարմացայ նրա վարմունքից եւ խնդրեցի վերցրել իր հասանելիքը: Սափրիչը եւ ես վիճում էինք դրամ վերցնելու եւ չը վերցնելու մասին, երբ երեք հոգի ներս մտան: Ես ճանաչեցի, հերթի ըսպասողներն էին, որ դուրս գնացին իմ թերթ կարդալու ժամանակ: Սափրիչս անմիջապէս ինձ ներկայացրեց.— Խընդրեմ ծանօթանաք, դերասան Զարիֆեան:— Շատ սիրեցի սափրիչիս այդ

հանդիսաւոր ներկայացնելու ձեւը: Բոլորը զլիարկները հանեցին եւ ձեռք աւին ինձ, ես էլ ողորմած ժպտով «սեղմեցի պարզած ձեռքերը: Տիրեց անյարմար լուսթիւն... Նրանցից մէկը դիմեց իր ընկերոջ:

—Ադա, դէ ասի էլի, խօի ես մընջալ:

Տիւսը պատասխանեց.

—Խօի չես տիւ ասըմ:

Երբորդը սկսեց իր ճառը.

—Պր. Զարիֆեան մենք էկալընք ներողութիւն խնդրելու ձեզանս:

—Ի՞նչ բանի համար, — հարցրի ես.

—Որ ձեր հասցէին ահանց պէաներ խօսացինք:

—Ես չգիտեմ թէ ի՞նչ էք ասել, որովհետեւ ձեր բարբառը չեմ հասկանում եւ ներում եմ ձեզ: Բայց հետաքրքիր է իմանալ թէ ի՞նչ էք ասել, հարցրի ես:

Մի քիչ տատանելուց յետոյ նրանցից մէկը պատմեց թէ ով ինչ է ասել:

Առաջինը ասել էր. «Հէօվա էաս ըողի ուէանդը. (ո՞վ է այս արջի գոյն մարդը):

Երկրորդը. — Գիլօխը ծակ ա ըրեւըմ (դատարկազլուէս է երեւում):

Երրորդը. — Տէնաս սոխ ա թէա՞ կէալրաս (տեսնես Ռո՞ւս է թէ Գերմանացի):

Առաջինը. — Վօնչ միննա, վօնչ էն մինը, կէաչի կիրծս դա (ոչ մէկն է, ոչ միւսը, Ամերիկացի է): Եննա տիւ որ կարգացեր «Մշակ»ը լիօխ տիւս քէացինք ամօթից:

Երբ ես վերցրել եմ «Մշակ»ը նոր բարեկամներս տեսնում են որ ես հայ եմ եւ կարծել են թէ իրանց ասածները հասկացել

եմ ու ամօթից բոլորը դուրս են գնացել ասելով. — Ադա իմ նանը քէ մատաղ, ծառ երիխողա իլէալ (իմ մայրը քեզ մատաղ, հայերէն զիացող է եղել):

Որքան ինձ անախորժ լինէր այդ դարձուածքները ես աշխատում էի ծիծաղել, որպէսզի նոր բարեկամներս անյարմար չզգան: Յետոյ երբ մենք արդէն մտերմացանք, նրանք պատմում էին իրանց չըջանում մեր առաջին հանդիպումը եւ դարձանում աւելացնելով.

—Բա դէս մունք հոնց իմանայինք, ախր էաս ուանդի էլ հայ կիլի (հատա մենք ինչպէս իմանայինք, այս գոյնի էլ հայ լինի):


Շուշին դարձաւ ինձ համար երկրորդ հայրենիք, այնուհետեւ յաճախ գնում էի Շուշի եւ լաւ ընկերական շրջան ունէի Ղարաբաղի մայրաքաղաքում:

Մագերիս գոյնը յաճախ ինձ ըստիպել է լսել իմ հասցէին ուղղած շատ բաներ եւ շատ զազանիքներ ուրիշների մասին, որովհետեւ ինձ ոչ ոք հայի տեղ չի գրել: Ես եւ իմ հասակակից դերասան ընկերս Վարդեան, որի հետ չորս տարի անբաժան էինք:

Օգտւելով մեր գոյներից (նա գրեթէ սեւամորթ էր, խսկ եւ չիկահեր) ճանապարհորդութեան ժամանակ, շողեկաւորում, ճաշարաններում, քրլըսներում, յաճախ խօսում էինք անգլիերէն, ֆրանսերէն, գերմաներէն, մի խօսքով այն լեզուներով որ մենք չը գիտէինք եւ կովկասում կարողանում էինք կլլեցնել լսողներին, մանաւանդ

որ մենք ունէինք մեր պայմանական նախադասութիւնները, որոնք գործ էինք անում երբ անհրաժեշտ էր մի բան հասկացրնել:

\*\*\*



ԶԱՐԻՖԵԱՆ — «Աբեղայ» (Հին Աստուածներ)

### ԶԻՆԻՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1900 թիւը ինձ համար ճակատագրական էր: Հարց էր ծագում, զինւոր զնալ, թէ ծառայել բեմին:

Մտածեցի այս փորձանքից ազատել եւ բարեկամներիս խորհուրդով ես ինձ դատաւարտեցի քաղցածութեան, անքնութեան, որ նիհարիմ, որպէսզի չլեցնէր զինւորական չափս, եւ այդ ինձ յաջողեց:

Երեք տարի շարունակ մարմինս տանջեցի, քայքայեցի առողջութիւնս եւ ազատեցի զինւորական ծառայութիւնից:

### ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

1903 թ. Փետրւար 13ին կատարեց իմ եւ Օր. Արաքսի պսակադրութեան հանդէսը, որը հրաւիրւած էր Պօլսից որպէս դերասանուհի եւ ծառայում էր միեւնոյն խմբում: Մեր ամուսնութիւնից երեք օր յետոյ մի փոքրիկ խմբով ճանապարհւեցինք անդրկասպեան երկիր՝ Կրասնավօտսք քաղաքը: Գործերս շատ յաջող էին գնում. մի քանի ամիս յետոյ զուգւած, զարդարւած վերադարձանք Բաքու ձրման սէզօնի համար: Գաղցր եւ դւարձալի յիշողութիւններով:

### ԻՄ ԱՆԳՎԻՆԵՐԷՆՈ

1904 թ. Ղզլար քաղաքից վերադառնալիս, Խասաֆիւրտ կայարանում ճամբորդներից մէկը խիստ հետաքրքրութեամբ դիտում էր մեզ, եւ սխալ ուսերէնով հարցրեց. «Որտեղից էք գալի՞ս»: «Ղզլարից», պատասխանեցի: «Ինչ գործով էք պարապւում»:

— Գինեգործութեամբ, — պատասխանեցի:



ԶԱՐԻՖԵԱՆ — «ՏԻՔ · Տօկէրաֆօ» (Թայֆուս)

«Այդ տիպիւնը ձեր ի՞նչն է...»

— Իմ եղբոր կինն է. —

«Դուք եւրոպացի էք».

— Այո՛:

«Անգլիացի էք».

— Այո՛:

Անձանօթ պարոնը քաղաքավարութեամբ տեղից բարձրացաւ, հանեց գլխարկը եւ ձեռք մեկնեց ինձ եւ անգլիերէն մի քանի բառ սասաց որ ես ի հարկէ չը հասկացայ եւ յայտնեց իր անունը. — «Զօրինգ»:

Ես էլ նոյն քաղաքավարութեամբ ձեռք տւի եւ յայտնեցի իմ անունը՝ «Զընգըր»:

Սկսեց մի կոմետի իմ եւ մըստըր Զօրինգի մէջ: Թէ ինչ էր հասկանում իմ ասած բառերից ես չը գիտեմ, բայց ես իրա ասածներից ոչինչ չէի հասկանում: Կինս անկարող լինելով իր ծիծաղը թաղցնել, դնաց կանանց բաժանմունքը եւ քնեց 4 ժամ: Մենք պէտք է սպասէինք դնացքին որը ուշացել էր:

Մըստըր Զօրինգը կանչեց սպասաւորին եւ պատեհներն տւեց: Մի քանի րոպէից, սեղանը պատրաստ էր եւ մենք սկսանք կերուխումը: Ես չէի թողնում որ մըստըր Զօրինգը խօսէր, որպէսզի նեղը չմնայի նրա տւած եւ իմ չհասկացած հարցերին պատասխանելու. շարունակ խօսում էի, իսկ թէ ինչ էի ասում չը գիտեմ, այդ լեզուն ոչ ես գիտեմ եւ ոչ էլ մըստըր Զօրինգը: Դա մի նոր լեզու էր: Վեց տարւայ իմ խաղացած դերերից սովորել էի մի քանի բառեր անգլիերէն, ֆրանսերէն եւ դերմաներէն. այդ բառերը ասելուց յետոյ թւում էի քաղաքների, հեղինակների անուններ—մանաւանդ որ գինին

տաքացրել էր գլուխս եւ լեզուս բացել: Յաճախ տեղիցս ելնելով, ճառ էի խօսում. այդ ժամանակ մըստըը Զօրինգն էլ էր կանգնում եւ գլխիկոր լսում իմ իմաստալից խօսքերը: Կայարանում սպասող Գերման գիւղացիները դիտում էին մեզ եւ ճառիցս յետոյ ծափահարում՝ հետեւելով մըստըը Զօրինգի օրինակին: Այսպէս անցաւ երեք ժամ: Շատախօսութիւնից եւ ոգելից ըմպելիքների ազդեցութիւնից կոկորդս այրում էր, վճռեցի մինչեւ գնացքի դալը դուրս գնալ եւ ազատել մըստըը Զօրինգից: Դուրս եկայ: Խիստ ցուրտ դիշեր էր, հեռացել էի կայարանից եւ քայլում էի մթութեան մէջ, բայց դուրսը երկար մնալուց մըսեցի եւ ստիպւած էի վերադառնալ կայարան: Մտայ երրորդ կարգի սրահը մըստըը Զօրինգից խուսափելու համար: Այնտեղ ուս գիւղացիների մօտ կանգնած էի երբ յանկարծ մէկը թեւիցս բռնեց բացազանչելով. «Օ՛, մըստըը Զընգըր». յետ նայեցի, մըստըը Զօրինգն էր, թեւանցուկ դընացինք նորից առաջին կարգի սրահը, ուր մեզ սպասում էր մեր քէֆի սեղանը: Ճարս կտրւած, յուսահատ, նորից սկսեցի ճառերս, այդ միջոցին բարեբախտաբար հնչեց կայարանի գանգը. թրէչըր դուրս էր գալիս վերջին կայարանից: Տոմսակալաճառը քնած աչքերով բաց արաւ տոմսերի պատուհանը: Առան բազմութիւնը խուժեց դէպի պատուհան, ես էլ գնացի տոմսակառնելու: Մըստըը Զօրինգը վճարեց 25 բուրլի՝ մեր կերածների արժէքը, եւ շտապեց ինձ մօտ: Ես գնեցի երկու տոմսակ Գրօզնա դեալու համար՝ երկրորդ կարգ: Մըստըը Զօրինգը պահանջեց Գրօզնաի համար մի տոմսակ՝ երկրորդ կարգ: Այդ արդէն ինձ դիւր չեկաւ... «Երեւի այս մարդը արկածախնդիր մէկն է» մտածե-

ցի ես. «Կարծում է թէ ես հարուստ մարդ եմ, խմացրեց, հարեցրեց որ ինձ կողոպտէ: Արթնացրի կնոջս. հաւաքեցի իրերս եւ մտանք թրէչն, մեզ հետեւեց եւ մըստըը Զօրինգը: Ճանապարհին սուտ քուն էի եղել որ այդ մարդը չը խօսի, որովհետեւ այլեւս ուժ չունէի պատասխանելու: Այդպէս հասանք Գրօզնա: Թրէչնից իջնելիս մըստըը Զօրինգը հարցրեց ինձ ո՞ւր պէտք է իջնանեմ. դոնէ ես այդպէս հասկացայ. դուցէ նա ուրիշ բան էր հարցնում, չը գիտեմ, կամ դուցէ իր տունն էր հրաւիրում. չը հասկացայ: Ես շարունակ կրկնում էի «Կրէնտ Զօթէլ», «Կրէնտ Զօթէլ». մենք միմիանց ձեռք սեղմեցինք եւ բաժանեցինք: Որպէսզի ազատեմ մը, Զօրինգի հալածանքից, ես գնացի մեր բարեկամի տունը: Բարեկամս զարմացաւ այդ ժամին ինձ տեսնելով: Ես պատմեցի նրան պատահած կոմէդիան եւ երբ նա լսեց մը. Զօրինգի անունը, յայտնեց որ նա շատ պատուաւոր եւ մեծ դիրք ունեցող մի մարդ է ծագումով Շուէտացի եւ նաւթահանքերում անգլիական ընկերութեան գլխաւոր կառավարիչն է:

Երկրորդ առաւօտ բարեկամս կը տեղեկանայ որ մը. Զօրինգը բոլոր հօթէլներում ինձ է փնտնել եւ չի գտել: Մեր ներկայացումը Գրօզնայի մէջ պէտք է լինէր քլուպի դահլիճում: Մը. Զօրինգը այդ քլուպի պատուաւոր անդամ էր եւ ամեն դիշեր լինում էր այնտեղ: Որպէս զի չպատահեմ մը. Զօրինգին եւ իմ անգլիերէն չը գիտնալու խայտառակութիւնը չբացւի ես հրաժարեցի Գրօզնայի ներկայացումից եւ անմիջապէս հեռացայ քաղաքից, վա՛յ... Մըստըը Զօրինգ կանչելով:

\*\*\*



ԶԱՐԻՖԵԱՆ — «Բաւոր Պետրոս» (Խաչագողներ)

ժարեցի Գրօզնայի ներկայացումից եւ անմիջապէս հեռացայ քաղաքից, վա՛յ... Մըստըը Զօրինգ կանչելով:



ԲԱՅԱԶԷԹ, ՎԱՆ ԵՒ ԱՂԹԱՄԱՐ

1911ին 8 հոգուց բաղկացած խումբով մեկնեցինք դէպի Վան:

Բայազէզում մեզ խնդրեցին մի ներկայացում տալ... Թատրոն չունէին: Շաբարի ամբարանոցում չաբարով լի տուրակներէջ բեմ շինեցինք, դորդերով դարդարեցինք եւ սկսեց ներկայացումը:

Խաղի ամենակարեւոր տեսարանում ոտքիս մէկը խրեց չաբարի տուրակների արանքը: Խաղակից ընկերս սպասում էր պատասխանի, իսկ ես ըզբազա՛ծ էի ոտքս անդունդից ազատելու: Երկար աշխատանքից յետոյ վերջապէս ազատեցի ոտքս: Ներկայացումը վերջացաւ. Բայազէզցիները մեզ լաւ հիւրասիրեցին... առաւօտեան մեկնեցինք դէպի Վան:

Չորրորդ օրը հասանք Վան:

Երկու ուկէս ամիս մնացինք եւ 14 ներկայացումներ տւինք Վանի մէջ: Ազատ օրերին շրջում էինք հնութիւնները տեսնելու, Վարազ, Նարէկ, Աղթամար եւ այլն: Աղթամար վանքի ձիւրը նստած գնում էինք Նարէկ, երբ յանկարծ մեր ճանապարհը կրտրեցին քրդական հազուսաներով ութ մարդիկ:

Մենք կանգ առանք. նրանցից մէկը սթուաց.— Ո՞վ է ձեր խմբապետը: Ես լուռ էի... վախենում էի ասել իմ անունը. ընկերներս ինձ էին նայում:

—Ձեզանից ո՞ր մէկն է Չարիֆեանը, որոտաց անձանօթը:

Թագնւել այլևս անկարելի էր մտածեցի ես, եւ գրեթէ ակամայ, հազիւ լսելի ձայնով ասացի. ես եմ, ի՞նչ էք կամենում: Անձանօթը սկսեց իր ճա-



ՉԱՐԻՖԵԱՆ — «Ուրիէլ Ակօստա»

որ... ընկերներս շրջապատեցին ինձ: «Ի՞նչ իրաւունքով դուք եկել էք Վան, եւ միայն վանեցիների համար ներկայացումներ կտաք, ի՞նչ բարոյական իրաւունք ունէք մեզ զրկելու, անմասն թողնելու ձեր տւած ներկայացումներից. չէի՞ք մտածում որ այս ձորերի մէջ էլ մարդիկ են ապրում որոնք նոյնպէս կարիք ունեն ձեր խրատական խաղերը տեսնելու եւ ճաշակելու դեղարուեստը, եւ այլն: Մենք գիւղացիներս պահանջում ենք որ մեզ համար էլ ներկայացումներ տաք», աւելացրեց նա. «Դրա՞մ կուզէք, դրամ կտանք, պատի՞ւ կուզէք պատիւ կտանք»: Ես ուրախութեամբ խոստացայ գնալ եւ իրենց գիւղում ներկայացում տալ ձրիարար եւ խնդրեցի մի փոքրիկ բեմի նման բան պատրաստել իրենց դպրոցներից մէկում: Այդ միջոցին մօտեցան մեր յետ մնացած ընկերները եւ Աղթամարի վանահայրը:

Դ. վարդապետը երբ լսեց գիւղացիների պահանջը եւ իմ խոստումը՝ ասաց. «Գնա Գալուստ, գիւղացիներին յայտնիր որ Շարաթ երեկոյ եւ Կիրակի ցերեկ Աղթամարում ներկայացումներ պիտի տայ Պ. Չարիֆեանը, թող ով ուզում է գալ տեսնելու»: Շատախցի Գալուստը եւ իր ընկերները շնորհակալութիւն յայտնեցին եւ յետ դարձան դէպի գիւղերը. նրանք եկել էին պատգամաւոր գիւղացիների կողմից:

Ուրբաթ կէսօրից յետոյ սկսեց Հայաձորի ու շրջակայ գիւղացիների գինւած եւ ձիւրով մուտքը: Շարան չարան դալիս էին դէպի Աղթամար: Այդ պատկերը ինձ յիշեցնում էր ուխտա-

ւորները, որոնք գնում են այս կամ այն սրբավայրը իրենց ուխտը կատարելու: Ամբողջ երկու օր ու գիշեր Աղթամարը քէֆի եւ ուրախութեան մէջ էր... պար, երգ, նուազ... ցնծում էին գիւղացիները երջանկութիւնից:

Ըստ իմ խոստման, Շարաթ գիշեր եւ Կիրակի ցերեկ խաղացինք «Արցունքի Հովիտ» եւ «Մարտոյ ձրագներ»: Կիրակի երեկոյեան գիւղացիները մեկնեցին իրենց գիւղերը դռն եւ հպարտ:

#### ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԻԵԼՈՒ ՊԱՀԱՆՁԸ

1911 թ. Օդեստոսին վերադարձանք Կովկաս՝ Վանայ քաղցր յիշողութիւններով: Թիֆլիզի Դրամատիքական Ընկերութիւնը իր ընդհանուր ժողովում որոշել էր ինձ ուղարկել Մօսկա եւ Եւրոպա ուսումնասիրելու արւեստը եւ կատարելագործելու:

Այդ որոշումը միշտ յետաձգւում էր, որովհետեւ իմ գերերը կատարող յարմար փոխանորդ չէին գտնում: Ես խիստ վշտացած էի Դրամատիկ Ընկերութեան Վարչութեան այդ վարմունքից: Երբ Վանից վերադարձայ, բաւականին դրամ էի շահել եւ վճուեցի իմ միջոցներով գնալ Մօսկա, մտնել գեղարւեստական թատրոնը կատարելագործելու համար:

1911 թ. Սեպտեմբերին ես արդէն Մօսկա էի եւ ինձ յաջողեց մտնել գեղարւեստական թատրոնը, որպէս ազատ ունկնդիր: Մի քանի խօսքով անկարելի է պատմել Մօսկայի գեղարւեստական թատրոնի մասին: Այդ թատրոնի գերազանցութեան մասին կարելի է խօսել օրեր, ամիսներ: Կը



ԶԱՐԻՖԵԱՆ «Դերասանի ֆին»

խօսեմ այդ մասին մի ուրիշ անգամ: Տ ամիս աշակերտելով ես միայն կարողացայ մօտաւորապէս ուսումնասիրել նրա սիսդէմը (մէթոտը) եւ բարձր արժանիքները՝ գեղեցիկը գեղեցկագոյն դարձնելու:

Միայն այսքան ասեմ որ մեծ ազդեցութիւն ունեցաւ իմ ապագայ գործունէութեան վրայ:

#### ՔԱՁ ԿԱՄԱԻՈՐԸ

1915 թ.ին Ղարսի մէջ խաղում էինք «Սենթը»: Որպէսզի աւելի շքեղ լինէր ներկայացումը տեղական զօրքի հայ կամաւոր զինւորներին հրաւիրեցի մասնակցելու: Եկել էին 100 հոգի իրենց զէնքերով: Ներկայացման ժամանակ գնդապետ Շտօկվիչը դիմում է զօրքին եւ առաջարկում նամակ տանել Գիներալ Տէր-Ղուկասովին, որ օդնութեան դայ եւ ազատէ Բայազէդ բերդի մէջ ապաստանող զինւորներին: Բերդի զինւորներից չեն ուզում գնալ եւ Վարդանը («Սենթը») վճռում է տանել այդ նամակը:

Ղարսում, երբ գնդապետը բեմի վրայ դիմեց զօրքին ասելով.

—Մի՞թէ ձեր մէջ չկայ մի սիրտ ունեցող աղամարդ— հայ զինւորներից մէկը առաջ եկաւ եւ ասաց. «Ես կը տանեմ, ձերդ գերազանցութիւն»:

Բուռն ծափահարութիւն:

Ես եւ իմ խաղակիցներս մնացինք շարած: Ինչպէ՞ս ուղղել այդ սխալը: Գնդապետ խաղացող դերասանը զրպեղով իր ծիծաղը յասաց.

—Ո՛չ, դաւակա, դու մեզ պէտք ես,

դու մնա այստեղ եւ դառնալով ինձ ասաց.

—Միթէ՞ ձեր մէջ չկայ մի ուրիշը որ տանի այս նամակը:

—Ես կտանեմ, եթէ ինձ թոյլ տան տանել:

Վարդադոյրը իջաւ առանց ծափահարութեան:

Խնդիրը այն էր որ եթէ այդ զինուորը տանէր նամակը, այնուհետեւ պարտաւոր էր իմ դերս խաղալ, որ յարմար լինէր, ապա թէ ոչ խաղը չէր կարելի շարունակելը: Երբ վերջացաւ տեսարանը, տաքարին զինուորը խիստ վշտացած հրաժարեց մընալ, որովհետեւ իրան չը թողին կատարել իր պարտքը:

**ՊԱՀԱԿԱՏԵՂԻՈՒՄ**

1918 թւին տաճկական սուրը ինձ ստիպեց մտնել կամաւորների շարքերը եւ ես գրեցի Ալէքսանդրապոլ քաղաքի բերդապահ զինուոր:

Մի քանի օր վարժութիւններ անելուց յետոյ, ինձ տւին մի հրացան եւ կանգնեցրին վառօդի պահեստի դռան առաջ: Գիշերւայ ժամը երկուսն էր. սարսափելի տեղատարափ, անձրեւը թրջել էր ինձ մինչեւ ոսկորներս: Չորի միջից յանկարծ մի խշշոց լսեցի, սարսափից քարացայ: Մի վայրկեանից յետոյ զգաստացայ եւ հրացանս ուղղեցի դէպի ձորը, որտեղից լսեց խշշոցը: Սպասողական դրութիւն էր, խըշոցը մօտենում էր, եւ աւելի սարսափելի դառնում: Գիշերւայ լուսթիւնը անմարդարնակ ձորը, խորհրդաւոր բերդի պահեստները, ահ ու սարսափ էին ազդում ինձ, իսկ մօտեցող խշշոցը քարացրել էր իմ ուղեղը: Յանկարծ ձորի կողմից, թուփերի միջից դուրս եկաւ մի սեւ շուն, որը անձրեւից թրջւած երեւի ապաստան էր փնտռում բերդի պարիսպների տակ: Եթէ հրացանս պայթէր խեղճ շնիկը անշուշտ սպանւած պիտի լինէր բարեբաղդաբար հրացանս չպայթեց:



ԶԱՐԻՑԵԱՆ — «Շէրլոկ Հօլմս»

**ԳԵՐՈՒԹԻՒՆ**

Սկսեց նահանջը եւ մենք ոտքով փախանք Ալէքսանդրապոլից: Համաձլի գիւղից կինս դնաց Ղարաքիլիսէ եւ ապա Երեւան, իսկ ես եւ աղջիկս՝ Յողիկը բռնեցինք եւ գերի մընացինք տաճիկների մօտ: Երկուս ու կէս ամիս անցած լսեցինք որ Հայաստանի անկախութիւն էր տըրւած: Մի թուրք սպայի միջոցաւ ինձ յաջողեց աղջկանս հետ Երեւան փախչել:

Չեմ ուզում նկարագրել այդ հինգ ամուսյ գերութեան օրերը, բաւական է յիշել որ երեք անգամ թաքնւելով ազատուել եմ մահից:

**ԳԱՂՑ**

Հասաւ 1920 թիւը: Տաճկաց բանակը մօտենում էր Ալէքսանդրապոլին:

18 թւի գերութեան օրերը յիշելով վճռեցի հեռանալ եւ բազմ օրոնել օտարութեան մէջ:

Երեքով անցանք Թիֆլիզ, ապա Պոլիս եւ երեք ամսից յետոյ Ռումանիա: Պուքարէստում թողի ընտանիքս եւ ես մեկնեցի Ամերիկա:

**ՇՈՂԵՆԱԻԻ ՄԷՁ**

1921 Մայիս 29ին Մեղալի Էլլաս շողենաւը ինձ հասցրեց Նիւ Եօրք:

Շողենաւի մէջ, ինչպէս շատերը, ես էլ մի քանի նախադասութիւններ սովորեցի եւ դոց արի, որ հարցաքննութեան ժամանակ պաշտօնեային պատասխանեմ:

Երբ պաշտօնեան ինձ սկսեց հարցաքննել, ես հանեցի անցադիրս, դերասանական վկայականս, նկարներս

զանազան դերերում, եւ այս բոլորը դրի սեղանի վրայ:

—What is your name? Հարցրեց պաշտօնեան:

—Յովհաննէս Զարիֆեան:

—How old are you?

—I am actor, եղաւ պատասխանս:

—I am asking how old are you?

—I am come from Constantinople, շարունակեցի ես դասս :

—Have you any relatives in this country?

—I am forty two.

—How long do you want to stay?

—Yes, this my pasaport, this my picture, I am actor, պընդում էի ես :

Պաշտօնեան տեսաւ որ ինձանից ոչինչ չէ կարող հասկանալ, կանչեց սպասաւորներին մէկին որ թարգմանէ :

Յոյն սպասաւորը մօտեցաւ ինձ եւ հարցրեց յունարէն :

—Թի՞ մու լէս :

Ես հարցրի. թիւրքէնա բիւր սէն :

—է՛ ազ բիւրամ, պատասխանեց նա :

—Դէ՛յ էֆէնդիա ինդիլիզձա, բէն էրմէնիէմ, կէլիբէմ Ստամպուղան, իսմէմ Յովհաննէս Ջարիֆեան դըր, զըրբ էբի հաշըմ՝ դըր, բուդա բէնիմ բաշպորթըմ, բուդա բէնիմ պատկերլերիմ, բէն օյինչի էմ — արթիստ, բիւր սըն... շարեցի ես :

Յոյն սպասաւորը վստահ եմ որ ոչինչ չը հասկացաւ, մանաւանդ որ նա էլ ինձ նման չը գիտէր թուրքերէն եւ ոչ էլ անգլիերէն : Յոյնը թարգմանեց իմ ասածներս կամկալով եւ կարմրելով :

Ամերիկացի պաշտօնեան բարկացաւ յոյն սպասաւորին վրայ, որը անմիջապէս հեռացաւ, ինձ խէթ-խէթ նայելով :

Մնացինք ես եւ Ամերիկացին : Նա ինձ էր նայում մտախոհ եւ էլ վիզս ծռած նրան էի նայում եւ զարմանում որ ինձ չի


հասկանում, ինձ՝ որ Մըսաըը Ջորինգի հետ կարողացել եմ երեք ժամ անգլիերէն խօսել :

Պաշտօնեան փորձեց էլի մի քանի հարցեր տալ : Ես անմիջապէս հանեցի վկայականս, անցազիրս, նկարներս եւ ասացի .

—This my picture, this my pasport, and this my certificate.

Պաշտօնեան մի քանի վայրկեան մտածելուց յետոյ, քթի տակ մոթմոթաց, եւ տոմսակս կնքելով ասաց . all right, go!...

Այդ օրվանից սկսեց իմ տանջանքը անգլիերէն չգիտնալու պատճառով :



ԶԱՐԻՖԵԱՆ — «Ստաման»

SOUTH STATION  
կամ  
ՉՈՐՍ ԵՒ ԿԷՍ ԺԱՄ  
ՍՐԲԻԵՅԻ ՄԷՁ

Լօրէնսից հեռագրեցի Պրօվիդէնս, որ «Երեկոյեան ժամը 9ին կը հասնեմ, դիմաւորեցէք», եւ ժամը 6ին մեկնեցի Լօրէնսից Բօստօն : Թրէյնը ինձ հանեց Նօրթ Սթէյշըն ժամը 7 եւ 1/4ին : Պայուսակներս վերցրի եւ մօտեցայ տոմսերի պատուհանին եւ 5 տօլար դրի պատուհանի առաջ եւ ասացի .

Providence, please.

Պաշտօնեան 5 տօլարս յետ տւեց եւ քթի տակ մըրթմըթաց : Ես

մտածեցի որ այս այն պատուհանը չէ որը Պրօվիդէնսի տոմսակ կը ծախէ : Մօտեցայ միւս պատուհանին եւ ասացի .

—Ticket Providence, please.

Այս պաշտօնեան էլ դըրամս ետ տւեց եւ քթի տակ բաներ մը բտաւ : Դրութիւնս լրջացաւ : Երեւի այս էլ չի եղել Պրօվիդէնս տանող տոմսերի պատուհանը : Մօտեցայ Յրդին՝ նոյնը, չոր-

բորդին՝ նոյնը, հինգերորդին՝ նոյնը: Մի խօսքով ամեն տեղ  
նոյն մոմոտցն էի լսում եւ չէի հասկանում ասածները:

Համբերութիւնս հատաւ, գնացի Bulletin Bord-ի մօտ եւ  
սկսեցի ուշի ուշով փնտռել Պրովիդէն-  
սի անունը: Այնտեղ Պրովիդէնսի անուն  
չկար: Յուսահատութիւնս սահման չու-  
նէր: Չորս կողմս նայեցի թէ մի հայ  
գտնեմ, բայց ոչ ոք չկար որ հարցնեմ  
թէ ո՞ր ժամին է գնում Պրովիդէնս  
տանող թրէյնը: Սկսեցի ողբաձայն եր-  
գել «Մեր Հայրենիք» որպէսզի եթէ հայ  
լինի «Մեր Հայրենիք»-ով կը հետաքրք-  
րուի եւ ես կը մօտենամ ու կը հար-  
ցընեմ: Ոչ ոք չնայեց եւ ոչ էլ հետա-  
քրքրեցին իմ «Մեր Հայրենիք»-ով:

Մի պաշտօնեայ սուլելով շրջում էր.  
կարծեցի թէ ոստիկան է եւ մօտեցայ.  
I want train to Providence, I am an actor  
ասացի ես: Պաշտօնեան չհասկանալով  
ասածս, իր երկար ականջը մօտեցրեց  
բերանիս եւ հարցրեց հաստ ձայնով.  
What?

Ես ցնցեցի եւ ասացի.

Պաշտօնեան բաներ ասաց եւ աւե-  
լացրեց South Station: Ահա այդ միեւ-  
նոյն նախադասութիւնն էր որ Նօրթ  
Սթէյշընի բոլոր տոմսակալաձառները  
իրանց քթի տակ մըմըթում էին. տար-  
բերութիւնն այն էր որ այս վերջինը  
պարզ հնչեց South Station բառերը որ  
եւ կարողացայ հասկանալ:

Ջղերս այնքան լարւած էին որ գը-  
րեթէ բարկացած բօռացի մարդու ե-  
րեսին. Where South Station? Ազնիւ  
պաշտօնեան փոխանակ բարկանալու  
իմ կողմութեան համար, թեւիցս բռնեց  
եւ տարաւ մինչեւ զրոյսի դուռը, ցոյց տեց  
սրպուէյը եւ երկար  
բացատրեց ինձ իմ գնալիք ճանապարհը:  
Հասկացայ որ պիտի  
մտնեմ սրպուէյ եւ այնտեղից պիտի  
գնամ South Station

Thank you ասացի, վերցրի երկու  
պաշտօնեայնէրս ու մը-  
տայ սրպուէյ:  
Երկար գնացի:



ԶԱՐԻՖԵԱՆ — «Համլէտ»

Շէրեաց:

Թրէյնը դուրս եկաւ գեանի տակից:  
—Փառք Աստուծոյ, կարծեմ հասանք:  
Աչքերս չորս բաց ա-

թէ ո՞ւր էի գնում չգիտեմ, բայց  
South Station չտեսայ: Արդէն ժամը  
Տը էր:

Մօտեցայ Քօնտրքորին թէ ո՞ւր է  
South Station-ը: Քօնտրքորը շատ պա-  
ղարիւն ինձ առաջարկեց իջնել եւ ու-  
րիչ քառ առնել: Ես իջայ եւ հակառակ  
կողմը տանող քառը առայ, որը նորից  
տարաւ ինձ սրպուէյ: Նորից մօտեցայ  
քօնտրքորին եւ հարցրի South Station?  
Այս քօնտրքորն էլ բաներ մը բսաւ եւ  
ինձ իջեցրեց: Պաշտօնեայ դրի գետին  
եւ յուսահատ սկսեցի դարձեալ «Մեր  
Հայրենիք»ը երգել: Մարդիկ անցնում  
դառնում էին, բայց ոչ ոք ինձ չէր մօ-  
տենում: Դադարեցի երգել եւ բարձր  
ձայնով կանչեցի. — «Հայ եմ փրնտը-  
րում, հայ եմ ուզում»: Մի ծերունի  
հետաքրքրութեամբ նայում էր ինձ,  
միտք էլ ունէր, երեւի հայ է մըտա-  
ծեցի ես եւ մօտեցայ ծերունիին ու հար-  
ցրի «Հայ էք»: Ծերունին պատաս-  
խանեց. What? Հնչումից երեսաց որ  
որ հրէայ էր եւ խախտ: Ասացի. I  
want South Station. Ծերունին ցոյց տը-  
ւեց գետնի տակի աւելի վարի յարկը  
եւ ինչ որ բաներ ասաց: Ես գնացի ցոյց  
տւած տեղը: Եկաւ թրէյնը: Քօնտրք-  
որին հարցրի South Station?

—Yes, պատասխանեց:

—Է՛հ, էլ պըծանք մտածեցի ես:

Նստեցի թրէյն ու գնացի: Գրնա-  
ցի... գնացի... բայց South Station

րած փնտռում էի մի չէնք, որ կայարանի նմանէր, բայց չէի գտնում: Վերջապէս մօտեցայ քօնտրըզօրին եւ հարցրի. Where South Station? Նա ասլաճ նայեց երեսիս եւ երեւի ասաց.

—«Է՛յ բարեկամ, ո՞ւր ես եկել, South Stationը վաղուց անցել ես»... Ես նրան այդպէս հասկացայ:

Յետոյ բացատրեց որ ուրիշ թըրէյն առնեմ: Այլեւս ուղեղս չէր գործում. յուսահատութիւնից զիչ էր մընում լաց լինէի:

Նորից նստեցի հակառակ կողմը գնացող թրէյնը: Մօտեցայ քօնտրըզօրին եւ ասացի. I want South Station, please, Providence train. Նա ասաց all right.

Վերջապէս չորս եւ կէս ժամ սրպուէյի մէջ թափառելով հասայ South Stationը: Թրէյնը կանգնեց, քօնտրըզօրը ինձ ցոյց տւեց եւ պօռաց. South Station!

Դուրս եկայ եւ նայեցի չորս կողմըս. ճանապարհ չկար որ դուրս գայի: Մարդիկ բարձրանում էին escalatorի վրայ կանգնած: Պայուսակներս առայ որ ես էլ բարձրանամ, բայց վախեցայ որ նորից ուրիշ տեղ դուրս գամ: Մօտեցայ մի պարոնի ու հարցրի. Where South Station? Անձանօթը ցոյց տւեց escalatorը. մօտեցայ: Ծանր պայուսակըս դրի վրան թէ չէ, պայուսակս գընաց եւ ես մնացի: Վերջապէս ես ինձ նետեցի escalatorի վրայ, որ հասնիմ պայուսակիս: Ելայ լոյս աշխարհ: Մըտայ South Station ժամը 11 եւ 20 րոպէին: Մօտեցայ տոմսակների պատու-



ՋԱՐԻՖԵԱՆ — «Ուրիշ Ակօստս»

հանին եւ ասացի. Please one ticket Providence. Մարդը առանց խօսքի տըւեց տոմսակը: Ուրախութեանս չափ շը կար: Հաւատացի որ South Station եմ արդէն: Ժամը 12ին հինգ թրէյնը շարժըւեց եւ Նը քսան րոպէ անց հասայ Պրօվիդէնս: Պայուսակներս վար դրի, մի սիգարէթ վառեցի եւ մտածում էի ինձ հետ պատահածի մասին: Ինձ դիմաւորողներ չկային: Երեւի եկել ու գնացել էին: Փորձեցի մի անգամ էլ «Մեր Հայրենիք» երգել, դուցէ մէկը դուրս գայ օղնութեան: Մի փոքր յետոյ մթութեան միջից մի սուէր երեւաց. ես սկսեցի աւելի բարձր երգել: Երիտասարդը մօտեցաւ ու հարցրեց.

—Դուք Պր. Ջարիֆեանն էք:

—Ա՛խ, այո՛, կարծեմ ես եմ...:

Երիտասարդը պատմեց, թէ դերասանները եկել են ժամը 9ից սպասել եւ վերջը գնացել են lunch մը առնելու:

—Lunch-ը ի՞նչ է, հարցրի ես:

Անօթի էին, գնացին մի զիչ բան ուտեն: Դուք հոս սպասեցէք, ես երթամ անոնց բերեմ, աւելացրեց նա:

—Օ՛, ո՛չ, ես էլ կղամ ձեզ հետ, էլ մենակ չեմ մնայ...: Հազիւ դուրս էինք եկել որ դերասանները հասան մեզ:

—Վա՛յ... Պր. Ջարիֆեան, ի՞նչ պատահեց ձեզ հետ, արդեօք արկիւ՞ծ մը, հարցնում էին նրանք...:

—Ա՛խ... ձգէք, էլ մի՛ հարցնէք, երկար պատմութիւն է... South Station... հասկանո՞ւմ էք... South Station!

\*\*\*



**ՎԵՐՁԱԲԱՆ**

ինչո՞ւ ընտրեցի բեմը .

Սկզբում ես յափշտակած եւ չըլացած էի նրա գեղեցկութիւնից եւ չըբեղութիւնից, իսկ երբ ճաշակեցի նրա դառնութիւնը ու քաղցրութիւնը, ես հասկացայ որ բեմը միակ անդարէզն է որտեղ մարդ կարող է ապրել իր ըզզացմունքների բուռն թափով, եւ դրա համար արժէ սիրել ու ծառայել այդ հմայիչ գործին: Ես համոզեցի որ բեմը նոյն ինքը կեանքն է:

Կոնւնսերի, փոթորիկների, յայթանախների վսեմ ասպարէզը:

Բեմը կեանքի գեղեցիկ հայելին է, ուր ամեն մէկը տեսնում է իր պատկերը ու հոգու արտացոլումը: Համոզմունքով ընտրեցի այս ասպարէզը եւ գիտակցարար սիրում եմ ցարդ:

Դերասան՝ Յ. ԶԱՐԻՖԵԱՆ

1923 Մայիս 14  
Նիւ Եօրք



ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Դերասան Յ. Զարիֆեանի

25-ամեայ Յոբելեանի

ՏԻՐԱՅՐ ՍՐԲԱԶԱՆ


Առաջնորդ Ամերիկահայոց  
Նախագահ

ԳՐԻԳՈՐ ԶՊՈՒԳ

Ա. Ատենապետ

ՏԻԹ. Ս. ՏԷՐ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Բ. Ատենապետ



**ՄԻՐՈՅ ԲԱԺԱԿԸ**

Որ Դերասանապետ Յ. Զարիֆեանի 25ամեայ Յոբելեանական Կեդր. Յանձնախումբը Նիւ Եօրքի զաղութի անունով կը նուիրէ Մեծ վարդեափն՝ հետեւեալ արձանագրութիւնով.

Դերասանապետ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՐԻՖԵԱՆԻ

իւր 25ամեայ Յոբելեանին առթիւ  
Նիւ Եօրքի Հայ գաղութին կողմէ  
20 Մայիս 1923

ՏԻԹ. ՅՈՎՀ. Գ. ԷՐԿԱՆԵԱՆ

Ա. Ատենադպիր

Ե. ԽԸՅՄԷԹԵԱՆ

Բ. Ատենադպիր

Յ. ՇԱՀՊՈՒՏԱՂԵԱՆ

Գանձապահ

Անդամներ

Վ. Եր. Ա. Ա. Պետիկեան

Վ. Եր. Խ. Կ. Պէննէեան

Տիկ. Եազրեան

Տիկ. Վ. Մաթիկեան

Տիկ. Շահէն

Հ. Ամարուկեան

Մ. Անդրէասեան

Տ. Արաւանեան

Գ. Ալէօն

Մ. Աւագեան

Գ. Գալուստ

Փ. Թէրլէմէզեան

Կ. Գալֆաեան

Մ. Յ. Թիթեաբեան

Մ. Թիւֆէկեան

Կ. Լօզմանեան

Բ. Համմալեան

Արշակ Մահտէսեան

Վ. Մ. Մալխոմ

Ս. Նարկիզեան

Մ. Շիրվանեան

Վ. Պասմանեան

Յ. Պարոյրեան

Հ. Սմարեան

Յ. Վարդերեսեան


Օ. Տոնէլեան

Ա. Տուրսունեան

Վահան Քիւրբեան

Գ. Ս. Բէպապեան

Ա. Ֆէրվանեան





**ՎԵՐՁԱԲԱՆ**

Ինչո՞ւ ընտրեցի բեմը .

Սկզբում ես յափշտակեամ եւ չըլացամ էի նրա գեղեցկութիւնից եւ չըքեղութիւնից, իսկ երբ ճաշակեցի նրա դառնութիւնը ու քաղցրութիւնը, ես հասկացայ որ բեմը միակ ասպարէզն է որտեղ մարդ կարող է ապրել իր ըզզացմունքների բուն թափով, եւ դրա համար արժէ սիրել ու ծառայել այդ հմայիչ գործին: Ես համոզեցի որ բեմը նոյն ինքը կեանքն է:

Կոիւնների, փոթորիկների, յաղթանակների վսեմ ասպարէզը:

Բեմը կեանքի գեղեցիկ հայելին է, ուր ամեն մէկը տեսնում է իր պատկերը ու հոգու արտացոլումը: Համոզմունքով ընտրեցի այս ասպարէզը եւ զիտակցարար սիրում եմ ցարդ:

Դերասան՝ **Յ. ԶԱՐԻՖԵԱՆ**


1923 Մայիս 14  
Նիւ Եօրք



**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ**  
Դերասան Յ. Զարիֆեանի  
25-ամեայ Յոբելեանի

**ՏԻՐԱՅՐ ՍՐԲԱԶԱՆ**  
Առաջնորդ Ամերիկահայոց  
Նախագահ

**ԳՐԻԳՈՐ ԶՊՈՒԳ**  
Ա. Ատենապետ  
ՏԻԹ. Ս. ՏԵՐ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ  
Բ. Ատենապետ



**ՄԻՐՈՅ ԲԱԺԱԿԸ**

Որ Դերասանապետ Յ. Զարիֆեանի 25ամեայ Յոբելեանական Կեդր. Յանձնախումբը Նիւ Եօրքի զազութի անունով կը նուիրէ Մեծ վարպետին՝ հետեւեալ արձանագրութիւնով .

Դերասանապետ  
**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՐԻՖԵԱՆԻ**  
իւր 25ամեայ Յոբելեանին առթիւ  
Նիւ Եօրքի Հայ զազութին կողմէ  
20 Մայիս 1923

- ՏԻԹ. ՅՈՎՀ. Գ. ԷՐԿԱՆԵԱՆ
- Ա. Ատենապետ
- Ե. ԵԼՅՄԷԹԵԱՆ
- Բ. Ատենապետ
- Յ. ՇԱՀՊՈՒՏԱՂԵԱՆ
- Գանձապահ

**Անդամներ**

- Վեր. Ա. Ա. Պետիկեան
- Վեր. Խ. Կ. Պէննէեան
- Տիկ. Եազբեան
- Տիկ. Վ. Մաքիկեան
- Տիկ. Շահէն
- Հ. Ամպրուկեան
- Մ. Անդրէասեան
- Տ. Արսլանեան
- Գ. Ալէօն
- Մ. Աւագեան
- Գ. Գալուստ
- Փ. Թէրլեմէզեան
- Կ. Գալֆեան
- Մ. Յ. Թիրեաֆեան
- Մ. Թիֆլիկեան
- Կ. Լօզմանեան
- Բ. Համնալեան
- Արշակ Մահտեսեան
- Վ. Մ. Մալխոյ
- Ս. Նարկիզեան
- Մ. Շիրվանեան
- Վ. Պասմանեան
- Յ. Պարոյրեան
- Հ. Սմարեան
- Յ. Վարդերեսեան
- Օ. Տոնէլեան
- Ա. Տուրունեան
- Վահան Քիրքեան
- Գ. Ս. Քէլպպեան
- Ա. Ֆէրվանեան









« Ազգային գրադարան



NL0307735

67

782144.9

9-37